

891.99

U-66

W. S. S.

12641

ԴԱ-ԲՈՅԱՆ

91.71-3

U-F9

ԳԵՂԻՐ ԱՅԼՈՒԹԻՐ

# ԸՆԿԵ ԱԱՆԴՈՒՒՆ

8.

Ա-ԱԽ ՆՈՐԱԴԱՅԻ ԴՐՈՂՆԵՐ

№ 6

«Ինչու ջախջախւած են երջանկութեան  
թեւերը», կ. Մօրօղովայի, Թարգմ. Յա-  
կովը Գենջեանի, 12 երես, զինն է 3 կ.

«Ինչու ջախջախւած են երջանկութեան  
թեւերը» մի գեղեցիկ լեզենդա է երջան-  
կութեան մասին: Գրւած է թեթև ոճով.  
Կարդացւում է աշխայժով: Թարգմանու-  
թիւնը լաւ է: Գինը 3 կոպէկ, թանկ չէ:

«Սովորանդակ»

Յ. Մ.

Ոչ միայն հայ ընթերցողը, այլ նոյն  
իսկ գրողը, հեղինակը շատ աղօտ գաղա-  
փար ունի օտար գրականութեան մասին,  
և այն ոչ միայն արդի, նորագոյն գրա-  
կանութեան, այլև այսպէս ասած արդէն  
կլասիկ գրականութեան:

Գենջեան ամուսինների ձեռնարկած  
գործը շատ կարենոր է, նաև միջոց կը  
տայ հայ համարակութեան ծանօթանալ  
ուսւ գրականութեան հետ:

881.71

0-66

18 NOV 2011

2282

Թ-ՌԽ ՆՈՐՄ-Դ-ՌԵ ԴՐՈՂՆԵՐ

ՓԵՇՏՈՒ ԱՅԼՈՒՐԻԲ

ՈՍԿԵ ՍԱՆԴՈՒԽՔ

1002  
605

Թարգմ. Յակովը Գենջեանի

331

Թիֆլիս  
Արագածիակ քաղաքական առաջնորդ  
1911 ՀԿՑՈՒՄ

01 AUG 2013

1968-

13

## ՈՍԿԵ ԱԱՆԴՈՒԽՎՔ

Նօվելլա Փեօլոր Սօլօգումք



Մօր մահւան օրից սկսած, էօնիդը չէր կարող և չէր էլ ուզում սփոփել և ծանրանում էր նորա վերայ անբաժան թախիծը, այնպէս անհամապատասխան նորա հասակին, —նորան միայն օրերս լրացաւ տասնեհինգ տարին։ Անցաւ արդէն մի քանի ամիս այն օրից, երբոր ձմեռուայ վերջին օրւայ հաւող ձիւնի վրայով յուղարկաւորութեան կառքը դանդաղ շարժւում էր հին պապական տան սանդուխքից, հին կեձի ծառուղու միջով, ուղեկցութեամբ ազգականների, բարեկամների և ծանօթների ամբոխով, կառքը շպարւած ու ու սպիտակով, մուգ գոյնի և անարկու, տանելով նեղւածք դադաղի մէջ անշունչ,

սիրեցեալ և թանկագին մօրը, — և սա-  
կայն, ինչպէս մահւան թախիծի առաջի  
օրը, պղտորւած և տիսուր էր լէօնիդը և ոչ  
մի բան նորա երեսից ժպիտ չէր քաղում,  
և ոչ մի բան նորան ոչ մի անգամ չէր ու-  
րախացնում: Ոչ մի բան!

Ամեն օր, վաղ առաւօտեան իջնում էր  
նա պարտէզ լայն քարէ սանդուխքով, և  
նստում էր նստարանի վերայ, որ դրւած  
էր սանդուխքի վարի հրապարակում: Նա-  
յում էր նա այդ մոխրագոյն բարձր սան-  
դուխքին, որի վրայով այնպէս դանդաղ  
և տիսուր տանում էին այն ժամանակ  
սկազգեստ մարդիկ սպիտակ դագաղը, —  
նայում էր, մտարերում էր, երևակա-  
յում էր ինչ որ տիսուր բան: Երբ որ  
անհրաժեշտ էր պարապւել մի ինչ որ  
բանով, նա վշտով և ակամայ թողնում  
էր իւր սիրած տեղը և յետոյ նորից  
շատպում էր բարձր սանդուխքի ստորոտը:  
Բլուրի վերայ կանգնած էր մի հին, մեծ

տուն, — նա այժմ բոլոր իւր կալւածքով  
պատկանում էր լէօնիդին: Երկար քարէ  
սանդուխքը իջնում էր ներքեւ, դէպի հին  
կեծի ծառերով ճեմելին և դէպի ուրախ  
կանաչազարդ պարտէզը: Մոխրագոյն  
քարից էին հղլւած նորա ճաղաշարքի  
սիւնեակները, և նա ընկած էր սարի  
վերայ, սառը և տիսուր: Այստեղ, վերևում,  
որտեղ տան մուտքի մօտ գտնվում էր  
պատշգամբը, նա գեռ չէր վերջանում,  
ծուռում էր դէպի տան ձախ կողմը, և  
դրսից բարձանում էր դէպի բարձր  
աշտարակը, որտեղից տեսնում էր հեռու  
ձգւած լայն շրջակայքը: Համեմատելով  
տան հետ՝ սանդուխքը խիստ մեծ էր  
երեսում, և նորա քարէ, սառը թախիծը  
կարծես թէ ծանրանում էր հին տան  
երկու կացարանների վերայ, և վեր էր  
ենուում դէպի բարձր աշտարակը, բանա-  
լով անթարթ և բարձր երկնքին, իւր  
վերամբարձ սառը հեքը, իւր աղօտ, յա-

ւիտենական հառաջքը։ Երբոր ուրախ  
ծիրանագոյն երկնքի վերայ խաղում էր  
երեկոյեան արշալոյսը, կարճատև ուրա-  
խութեամբ ալանում էին սառը քարէ  
աստիճանները, —և նորից անոյժ մարում  
էր նա։ Թէ պարզ լինէր երկինքը սան-  
դուխքի և աշտարակի վերայ, թէ մթա-  
զնէր մոռայլ ամպերի թախծով, —թւում  
էր միշտ լէօնիդին, որ աներեսոյթ տըխ-  
րութեան լրաբերները իջնում էին դէպի  
նա քարէ աստիճանների ստանութեամբ։  
Եւ նոցա թեմերը սուր են, երկար և սե, և  
նոցա աչքերի մէջ բոցալառ խաւար, և  
նոցա նուրբ ձեռքերում լեփ-լեցուն արտա-  
սւասափորներ։ Նոցա հայացքները խորը  
ընկնում էին լէօնիդի հոգու մէջ, —և չէր  
ժամուռմ նա ցերեկին և արեգակին, և չէր  
ուրախանում հինաւուց պարտիդի զրկում  
եռացող խնդութեան և ծիծաղին։

Իզուր բուրում էին, երբներանգին էին  
տալիս լէօնիդի առաջ ծաղիկները, պահ-

պահւած, փորձառու հմուտ պարտիղպանի  
խնամքով, —իզուր երկնակամարը կապ-  
տին էր տալիս լէօնիդի գլխով անամպ օր-  
ւայ անվերջ բարձրութեան մէջ, — իզուր  
ձնգում էին նորա վրայով թեթևաթև թըռ-  
չունների արագ յանկարձակի ձիչերը և զը-  
ւարձալի ուրախ նոցա ճռողիւնը, — և ի-  
զուր գալիս էին լէօնիդի մօր հետը խօսե-  
լու, նորան մխիթարելու և զրաղեցնելու նո-  
րա բազմաթիւ ազգականները, — քոյրել, մօ-  
րաքոյրերը, — և նոցա ընկերունէին երը, և ժպ-  
տում էին նորան անհոգ, ալաւագոյն, հրա-  
պուրիչ ժպիտներով, — իզուր! լէօնիդին  
ոչ մի բան չէր ուրախացնում, և ոչ մի բան  
չէր քաղում նորա շըթունքներից ժպիտ։  
Նորա ելենա քոյրը ասում էր նորան՝  
— Մէնք ամենքս սիրում էինք մայրի-  
կին և նորա մուգ-ճաղար աչքերը ջրա-  
կալում էին։  
— Մէնք բոլորս էլ չենք կարող նո-  
րան մոռանալ...

Եւ թեթև տխրութեամբ մթագնում էր  
նորա սիրելի դէմքը, — տասնևեօթը տարե-  
կան մաքուր սրտով աղջկայ սիրելի դէմքը:  
— Բայց միթէ մայրիկը, մեր սիրելի  
մայրիկը, գոհ կը մնէր, եթէ տեսնէր,  
որ մենք անվերջ վշտանում ենք և լաց  
ենք լինում?

Եւ պատասխանից նորան լէօնիդը՝  
— Երբոր ես ծածկում եմ աչքերս, ինձ  
երկում է, որ այս աստիճանների վրայով  
մէկը միւսի հետեւց գալիս են դէպի ինձ  
մեր տանից տխրութեան լրաբերներ: Եւ  
մօտենում են ինձ մէկը միւսի հետեւց,  
և ես տեսնում եմ ոև թերի սուր կոտր-  
ւածք, և լուռմ եմ, — իւրաքանչիւրը ա-  
սում է ինձ մի գառն խօսք: Եւ նոցա  
խօսքերի մէջ — նախատինք անարդար  
կեանքին և փառաբանութիւն սփոփիչ  
մահւան: Եւ անցնում են: Երբոր ես զա-  
լիս եմ այստեղ գիշերը, ես նորից տես-  
նում եմ նոցա սառը աստիճանների վե-

րայ, սառը լուսնի տակ, — և նոցա զգեստ-  
ները ազօտ կերպով սպիտակին են տա-  
լիս և նոցա աչքերը մթագնած են, և նո-  
ցա խօսքերը դառն են, — ոհի, դառն են,  
բայց և խնդագին են, խնդագին են խըն-  
դութեամբ, մահու չափ կճող իմ սիրաը:

Եւ ասում էր նորան ելենան՝

— Նոքա ճշմարտութիւն չեն ասում:  
Ինչ նշանակութիւն ունի, որ նոքա գա-  
լիս են քեզ մօտ մեր հին տանից! Դու  
չը պիտիհաւատաս նրանց: Նոքա չար հո-  
գու չար պատզամաւորներն են, և խա-  
րուսիկ են նոցա վշտահար հայեացքները,  
և նոցա տխուր խօսքերը — ստութիւն է:  
Միթէ դու չը գիտես, որ վազուց արդէն  
դատապարտւած է նոցա չար, նենդա-  
միտ ներշնչումների անճշմարտութիւնը?

— Ումնով է դատապարտւած? Երբ? —  
տըխուր հարցնում էր լէօնիդը:

Ուշադիր լսում էր նորա պատասխանը,  
և յոյս էր տածում լսելու մի ինչոր ան-

վիճելի բան, որ կարողանար յաղթել իւր  
թախիծը: Բայց չէր կարողանում հաւա-  
տալ նորան, ինչոր ասում էր, պատաս-  
խանելով նորան, Ելենան:

Ասում էր՝

—Միթէ դու մոռացել ես ամենաքաղցր  
անունը նորա, որ ծնւեց, որ արդարացնի  
կեանքը և յաղթի մահը?

Եւ պատասխանեց նորան Լէօնիդը՝

—Նա ծնւեց, և մենք նորան սպանե-  
ցինք: Նա ծնւում է, և մենք նորան սպա-  
նում ենք: Ո՞հ, գիտեմ, —յայտնազործե-  
ցան հրաշքներ և փառքը, իսկ մեզ ինչ?՝  
Ճահճանում ենք մենք անմիտ և անձև  
կեանքի խաւարի մէջ: Եւ ինչպէս չհաւա-  
տամ անծայր վշտի սիրելի լրաբերներին,  
որոնք իջնում են դէպի ինձ այս մոխրա-  
գոյն սանդուխքի սամնութեան վրայով!՝

Լոեցին երկար:

Եւ հարցրեց Ելենան՝

—Միթէ մենք միայն սպանում ենք?

Տանջւելով ստեղծագործում ենք և ստեղ-  
ծագործական սխրագոծութեամբ ուրա-  
խացնելով ուրախանում ենք:

—Ուրախութիւն չը կայ ինձ համար, —  
ասում էր Լէօնիդը:

—Ծանր քարեր կան սրտիս վերայ:

—Ես կը վերցնեմ նոցա, —ասում էր Ե-  
լենան:

—Զեմ ուզում, —պատասխանեց Լէօնիդը:

—Դառն է իմ վիշտը, բայց իմ ուղին  
արգար է, և դէպի կեանքն չէ, որ տա-  
նում է ինձ նա: Վշտից կմեռնեմ, այս-  
տեղ այս մոխրագոյն սալաքարերի մօտ,  
այստեղ, անընդահատ իջնող թաղծութեան  
լրաբերների ոտերի տակ:

Եւ ահա անընկճելի կամքի արաայայտու-  
թիւն ընկաւ Ելենայի հրաշալի դէմքի վե-  
րայ, և նորա սկ յոնքերը յամառթեամբ  
կիտեցին, և նորա մութ աչքերը սպառ-  
նալիքով բարձրացան դէպի հին տունը և  
դէպի մոխրագոյն աստիճանները, որոնց

Վրայով իջնում էին անտեսանելիները: Նա  
ասաց՝

—Ոչ, այդպէս չի կարող լինել! Եթէ  
նոյն իսկ նոքա արդար լինեն, չար և ան-  
խնդում, այնուամենայնիւ ին կամքը կը  
կերպարանափոխի թախծուտ տիեզերքը ոգե-  
ւորութեան լուսաւոր տիեզերքի: Ուրա-  
խութեան աւետով կը հմայեմ այս ծանր  
սանդուխքի՝ մոխրագոյն աստիճանները, և  
նորա տեղը ոսկէ դու կը տեսնես սան-  
դուխք, և այդ սանդուխքով կը իջեցնեմ  
դէպի քեզ ինդագին աւետարերուհիներ,  
մի եթերային շարք աւետարերուհիների,  
լցւած ինդութեամբ և ինդացնող: Այն  
ժամանակ դու, Լէօնիդ, կը հաւատաս  
արդեօք նոցա և ինձ? Ալն ժամանակ կը  
միտթարւես արեօք դու? Այն ժամանակ  
կը օրհնես արդեօք դու երկրային, սիրելի  
էութեան թեթև, քաղցր օդը?

—Այո,—խաղաղ պատասխանեց Լէօ-  
նիդը,—այն ժամանակ կը հաւատամ, և

կը սփոփւեմ, և կ'օրհնեմ: Բալց ոչ, Ելե-  
նա,—այս սանդուխքը այնքան բարձր է,  
այնքան ծանր, այնքան սառն,—ուրեմն  
ինչպես կարող է նա լինել ոսկէ սան-  
դուխք? կարող են արդեօք նորա կարծր  
աստիճանների վրայով անցնել անձայն  
ինդացող կոյսերի նուրբ ոտերը? Ելենան  
ոչինչ չը պատասխանեց դորան: Գնաց:  
Եւ թողեց նորան մեայնակ իւր վշտի հետ  
միասին: Գնաց իւր քոյրերի և ընկերու-  
հիների մօտ, և երկար խօսում էր նոցա  
հետ ինչոր բանի մասին և խօսքի էր ան-  
ցնում նոցա, ինչոր բանի թեքելով նոցա:

Թալիս էին և Լէօնիդի մօտ ուրիշները,  
և միսիթարելով, խօսում էին նորա հետ:  
Քօյրեկ Լիզան, սիրահարւած գեղեցկու-  
հին պատրաստ էր անվերջ խօսել իւր  
փեսայի մասին: Եւ յանկարծ, ինքն իրեն  
ընդհատելով, ասում էր՝

—Սիրելի Լէօնիդ, հաւատա ինձ,—  
կեանքը այնքան լաւ է, այնքան քաղցր

է ապրել! Միայն դու մէնակ լքում ես  
բերում մեզ բոլորիս վերայ: Դադարիր  
ափսոսալուց և տիրելուց: Եղիր, ինչպէս  
բոլոր բարի մարդիկն են:

Լէօնիդը հանգարդ պատասխանեց նո-  
րան:

Դու բաղդաւոր ես և ուրախ, գնա հէնց  
այդպիսի ուրախների և բաղդաւորների  
մօտ, իսկ ինձ թող:

Նա թեթև կերպով հառաջում էր և հե-  
ռանում:

Դալիս էր Աննա Պետրովնան, Ֆելչե-  
րուհին: Նա նստում էր Լէօնիդի կողքին,  
բարակ, ուղիղ, ժպտում էր մեծ բերանի  
չոր, բարակ շրթունքներով, վառում էր  
ծխախոտը և ասում:

—Շատ վնասակար է այսքան երկար  
ժամանակ ձանձրոյթ զգալ: Դա կարող է  
վագ աղգել ձեր առողջութեան՝ վերայ,  
Լէօնիդ:

Լէօնիդը հարևանցի կերպով նայում էր

Աննա Պետրովնայի ծոծրակի վերայ հիւ-  
սած սև մազերի ձիգ կապոցը և լսում էր:  
Աննա Պետրովնան շարունակում էր՝

Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել:  
Ամենից լւաւ է բժշկի գիմել, բայց և, մին-  
չև բժիշկի գուլը, կարելի է մի բան ձեռ-  
նարկել: Մարմնամարզութիւն, խաղեր,  
լողացում,—այդ ամէն ինչը կարող է փո-  
խել ձեր տրամադրութիւնը գէպի լւաւ:  
Դուք այսօր լւացւել էք, Լէօնիդը?

—Դեռ ես ոչ, —պատասխանեց Լէօնիդը:

—Ես ձեղ խորհուրդ կը տայի, հէնց  
այժմ և եթ լողանալ:

Նա երկար բարակ մատերով նեղ ճար-  
մանդով սև գօտկից հանում էր փոքրիկ  
ժամացոյցը, ուշադիր նայում էր նորա  
մուգ-սպիտակ թւացոյցի վերայ, մի բո-  
պէ ընկնում էր մտածմունքի մէջ և ա-  
սում էր՝

—Այո, այժմ իսկ և իսկ յարմար ժա-  
մանակն է: Ուրիշն զնացէք, Լէօնիդ, յար-

մար ժամանակը մի բաց թողէք, երբ դեռ  
արեգակը այնքան իարձր չէ:

— Լաւ, — ասում էր Լէօնիդը:

Նա գնում էր լողանալու: Ոչ այնքան  
լայն և խոր հանդարտ գետը երկար ա-  
ղեղնաձև ծոռւմ անցնում էր հին տան  
պարտիզով: Դաշտերի հեռուն կանաչում  
էր նորա հետեւից, հանդարտ, տխուր, իւր  
լուռթեան մէջ սուզելով հեռաւոր ձայ-  
ները:

Լէօնիդը մտնում էր սառը ջրի մէջ, և  
լողում անցնում էր ափի միւս կողմը և  
յետ էր դառնում: Յուսատու էր ջրի սա-  
ռը խորքում և, կեանքի մասին չէր, որ  
նա խօսում էր Լէօնիդին: Մահւան մա-  
սին, սառը, հանգիստ, սփոփող, տանող  
չար խոնջից անվերջ անսապատում, ան-  
միտ վառող նրակոնի աչքերի տակ:

Լէօնիդը անշտապ հագնուում էր: Նա  
կամացուկ անցնում էր ափի խոնաւ աւա-  
զի վրայով, մարգագետինների ջերմացած

արօտի վրայով, ծառողիների մանր չոր  
աւազի վրայով, և հողը թեքւու էր նորա  
մերկ գարշապարի տակ, մայրենի, սիրե-  
լի հողը, այն հողը, որի մէջ քնած է նո-  
րա մայրը և ցողապատ արօտը նուրբ կեր-  
պով փաթաթւում էր մինչև ծնկները մերկ  
նորա ոտներին:

Սիրելիդ իմ հող, քեզանից չէ որ ծագել  
է ամբողջ հողային կեանքը? Բայց խո-  
նարհւելով վշտահար պատանու գարշա-  
պարի տակ, կեանքի մասին չէ որ գու  
յիշեցնում ես նորան, սփոփող հանգստու-  
թեան ես կանչում գու քո խորութեան,  
խաղաղութեան և խաւարի մէջ:

Լէօնիդը վերազանում էր մոխրագոյն  
սանդուխքի ստորոտը գտնւած նստարա-  
նին: Եւ նորա ոտներին հպւում էր քարէ  
սստիճանների սառնութիւնը, և ծիծա-  
զում էր ոմն անտեսանելին, կրկնելով՝

— Ապա ուր է ոսկէ սանդուխքը?

Ծխախոտի թեթև ամպիկը կապուտին

էր տալիս, տարածւելով ամառային տաք առաւօտեան օդում, — ինչպէս ինսկի ծուխ կապտին էր տալիս ծխամած ամպիկը:

Աննա Պետրովնան ծխում էր, նստած նստարանին, և, ժպտալով Լէօնիդին, նայում էր կանաչի վաղորդեան ցօղով ծածկւած նորա ոտներին:

—Ահա այսպէս աւելի լաւ է, — ասում էր նա:

—Այժմ ապա պարապեցէք մարմնամազութեամբ, լողանալուց յետոյ դա շատ օգտակար է: Դէս, անենք, ահա ինչ:

Նա կիտում էր յոնքերը, և ամբողջ նորա նիհար երեսը արտայայտում էր լուրջ գործնական մտազբազութիւն՝ մի րոպէ մտքի էր ընկնում, և, վերջապէս անւանում է, մի որևէ մարմնամարզական վարժութիւն: Լէօնիդը հնագանդ կատարում էր նորա կարգադրութիւնը և մէկը միւսի յետևեց կատարում էր մի քանի վարժութիւններ: Յարմար էր մարմնին շարժ-

ւել թեթև, կարճ ամառային շորի մէջ, կուրծքը թեթև շնչառում էր բարակ սպիտակ քաթանի տակ, — բայց նորա երեսը խաղաղ էր ու անխնդում, և ժպիտները չէին ծաղկում նորա վերայ, և հէնց դորա համար էլ կողմնակի մարդուն տարօրինակ. էր թւում նայել այդ պարտիզում կատարւող մարմնամարզութեան վերայ, — բարձր մոխրագոյն, դէպի հին առնը, էլ աւելի բարձր, դէպի նորա աշտարակը տանող սանդուխքի ստորոտում գտնւած աւազուտ հրապարակի վրայ:

Բայց Աննա Պետրովնան գոհ էր: Նա լուրջ հաշուում էր շարժողութեան տեմպը:

—Մէկ! Երկու! Երեք! Չորս!

Երբոր, նորա կարծիքով, բաւական էր, նա փոխանակ «Չորս» ասում էր՝ կանգնիր!

Եւ հնարում էր նոր վարժութիւններ: Երկու շարժողութիւնների ընդմիջոցին կը կնում էր՝

—Ամենազլխաւորը, շնչեցէք աղատ և  
խորը: Նորմալ շնչառութիւնը — լաւ ինք-  
նազգացութիւնը ամենանշանաւոր պայ-  
մաններից մէկն է:

Էքօնիդը նայում էր նորա լուրջ դէմքին,  
նորա դուրս ցցւած մոնղոլական ծնոտնե-  
րով նիհարաւուն մուգ այտերին, և մտա-  
ծում էր, որ նա ամբողջովին նման է ու-  
րիշի խօսքերով լցւած, մի մեքենայական  
բուրբիկի, և որ նա ինքն իրեն երրէք ոչ մի  
բան մտածելու ընդունակութիւն չունի, և  
ոչ մի բան աշխարքում ոչ մի անգամ իւրո-  
վին չի զգացել: Եւ նա մտածում էր, թէ  
որ երկրի վրայ ապրելու էլ պէտք լինի,  
այդ դէպքում լաւ կը լինի — ահա այդպի-  
սի «օրգանիզմով»:

Եւ Աննա Պետրովնան ասում էր՝

—Մարդկային օրգանիզմը իւր կանոնա-  
ւոր զարգացման համար պահանջում է ո-  
րոշ պայմաններ, որոնք քիչ թէ շատ ճիշտ  
կերպով, գիտութիւնը հաստատել է: Դէս,

աղատ շարժումները բաւական են: Այժմ  
մինք կը պարապւենք վազ տալով: Ես  
վազում եմ, դուք իմ յետենից հասնում  
եք: Դուք յիշում էք, յոյս ունեմ, ինչպէս  
է հարկաւոր վազելու ժամանակ իրանը  
բռնել? գլխաւորապէս շնչեցէք աղատ և  
խորը:

Աննա Պետրովնան դէն էր ձգում հան-  
գած պապիրոսը, վեր էր կենում, ուղղում  
էր իւր մանիշակագոյն ներքնազգեստի  
տիրամած ծալքերը, և ծափին տալով,  
համաչափ հաշւում էր՝

—Մէկ! Երկու! Երեք!

«Երեք» խօսքով նա պոկւում էր իւր  
տեղից և սլանում էր կեծի ծառուղով,  
արմունկները սեղմելով կողքերին և ուսերը  
յետ տանելով, որպէսզի կուրծքը աւելի ա-  
զատ շունչ քաշէ: Բայց նորա դէմքը մնում  
էր հոգատար արտայայտութեամբ և նո-  
րա բարակ շրթունքները թոյլ և կեղծ կեր-  
պով ժպտում էին, ճիշտ համաձայն յօրի-

Նած լինէր դա:

Լէօնիդը վազում էր նորա յետևից ոչ  
կամաց, ոչ շուտ, ոչ յետևից համելով և ոչ  
յետ մնալով: Նորա բարձր բաց ոտների  
շարժումները գեղեցիկ և թեթև էին, և նոր  
բա ձեռքերը շարժում էին, ինչպէս վա-  
զող պատանի կիսաստծոյ ձեռները, նորա  
դէմքը մնում էր տիսուր, և ժպիտը չը կար  
նորա ալ, նորա նուրբ շրթունքների վերայ,  
և բարախում էր սիրտը կրծքում և սեղմ-  
ուում էր թախծի և տիսութեան հեքով,  
և նորա բիթմական վազը ճիշտ նման լի-  
նէր մահւան ճանապարհին գտնւած վեր-  
ջին սլացող պատոյտի մէջ յափշտակող  
վազին: Տերենսերի և արօտի կանաչ ուրա-  
խութեան վերայ մանիշակագոյն ներքնա-  
զգեստի ծածանումը թւում էր նորան,  
ինչպէս անյուսալի վշտի անտեսանելի  
ծածանող մի գոյն, որը սլացող կերպով  
տանում էր դէպի մահւան ճանապարհը:  
Վազելով մինչև գետափը, Աննա Պետրով-

նան կանգնում էր և ասում՝

—Դուք, Լէօնիդ, էլի չը կարողացաք  
հասնել ինձ: Թէկ ես լաւ եմ վազում, բայց  
և այնպէս գոհ եմ: Եւ ես յոյս ունեմ, որ  
այս օրւայ վարժութիւնները բարեյաջող  
ազգեցութիւն կունենան ձեր օրգանիզմի  
ընդհանուր գրութեան վերայ, ապա ու-  
րեմն, և ձեր արամագրութեան վերայ:

Լէօնիդը շնոհակալութիւն էր յայտնում  
Աննա Պետրովնային, և գնում էր մշտա-  
կան մոխրագոյն սամպուխքի ստորոտում  
գտնւած իւր նստարանի մօտ: Եւ, նայե-  
լով նորա բարձր խիստ աստիճաններին և  
ծանր ճաղաշարքերի խիստ գծերին, նա  
անյուսալի թախծութեամբ մտածում էր՝

—Կը մեռնեմ վշտից, իսկ գու, երբէք  
ուկէ սանդուխք չես դառնալ, և չեն իշ-  
նել դէպի ինձ հոգին յափշտակող և թա-  
խիծն ու մահը յաղթող սքանչացման կա-  
խարդող աւետարերները:

Ծածկում էր աչքերը, և անցում էին

նորա առաջով վշտի լրաբերները: Եւ նորացա զգեստները սպիտակ էին, և նոցաթերը սև էին, երկար և սուր, և նոցախստ շրթունքներից ընկնում էին դառնագին խօսքեր: Ահա նորից տարածում էին յալտնի չէ ում վեհերոտ ձայները, — կուսական ձայները հնչում էին խռոված և ուրախ:

Լէօնիդը բաց էր անում աչքերը: Նրա առաջ կանգնած էին քահանայաղուսարներ, ալաթուշ, խոռվայոյզ—ուրախ աղջիկներ՝ Ալետինա, Անտոնինա, Վալենտինա և Զինաիդա:

Նոքա հրճում էին մէկը միւսին, քըչփչում էին, և, վերջապէս, մեծը, Ալետինան, ասում էր Լէօնիդին՝

— Ընկերացէք մեզ մեր զրօսանքին Լէօնիդ:

— Ես զրօսնելու ցանկութիւն չունեմ, — պատասխանեց Լէօնիդը:  
— Իսկ այստեղ ձեզ հետ նստել կարելի

է, թոյլ կը տաք, Լէօնիդ? — հարցնում էր Անտոնինան:

— Խնդրում եմ, նստեցէք, — պատասխանեց Լէօնիդը հանգիստ և ոչ ուրախ: Թոյրերը կողք-կողքի տեղաւորում էին: Նոցա բաց գոյնի շորերը դորա հետ միասին ինչոր խշխում էին, կարծես թեթևակի օսլայեած լինէին: Նոքա քրքջում էին, իրար երեսի էին նայում, և խօսակցութիւնը բաց էր անում արդէն երրորդը, կարգով:

Ինձ շատ դուր է գալիս ձեր պարտէզը, — ասում էր Վալենտինան:

Եւ փոքրը, Զինաիդան, խօսում էր նորանից յետոյ՝

— Շատ գեղեցիկ սանդուխը է, իսկ վերակից, աշտարակից, զարմանալի, հիասքանչ տեսարան է բացւում դէպի ամբողջ զրջակայքը:

Ես չեմ հասկանում, — ասում էր Ալետինան, — ինչպէս կարելի է տաղտուկ

զգալ, երբոր ունես այսպիսի շքեղ տուն  
այսպիսի զմալեցուցիչ սանդուխքով, և  
այսպիսի մեծաշուք աշտարակ այդպիսի  
գերզանց աեսարանով:

Անտոնինան ասում էր՝

—Հաճեցէք մեզ շնորհել մի մեծ բաւա-  
կանութիւն, բարձրանանք ձեզ հետ աշ-  
տարակը շրջակայ տեսարանները դիտե-  
լու համար:

—Գնանք, —անտարբեր ասում էր Լէօ-  
նիդը:

Քահանայադուստրները խնդագին սլա-  
նում էին դէպի վեր, իսկ նոցա յետեկից  
գնում էր Լէօնիդը: Օ՛, ձանձրակի երթ  
մոխրագոյն քարէ աստիճաններով: Եւ  
քարէ սառնութիւն ոտների տակ և կոշտ  
քարեր ոտների տակ:

Դէիպի վեր տանող և տան մուտքի մօտ  
պատշգամբում երեք հրապարակներից ա-  
մէն մէկում քահանայադուստրները կանգ  
էին առնում, հիանում էին և ախ էին  
քաշում:

Եւ, վերջապէս, նոքա աշտարակի վրայ  
են: Քահանայադուստրները մահանում  
էին հիացմունքից:

Ախ, սիրելի երկրային հեռուներ? Դուք  
կանաչում էք և ծաղկում էք, և ազատ  
քամին է, որ անցնում է ձեր վրայով,  
ծածանելով գորշագոյն փոշոտ մրրիկը, —  
բայց ամբողջ ձեր դեռափթիթ խնդու-  
թիւնը թունաւորւած է մահան խոնջով?

Եւ չը կայ Լէօնիդի համար խնդութիւն,  
և չը կայ ժպիտ նորա շրթունքներին: Քահանայադուստրները իջնում են աշտա-  
րակից, և նայում են նորա թախծամած  
դէմքին: Նոքա բարի են, և ցանկանում  
են զրադեցնել Լէօնիդին և ուրախացնել,  
բայց չունեն նոքա սփոփիչ խօսքեր, և  
հառաջում են, և գնում են:

Երբեմն զալիս է Լէօնիդի մօտ տեղա-  
ցի գիւղական ուսուցչուհին Մարիա Նի-  
կոլաևնան, մի ջահել աղջիկ, նա ունի  
շատ խելացի դէմք, փափուկ, ինչպէս ձիու-

պողներ, և հեզ մոխրագոյն աչեր: Նա  
մշտական ման է ածում իր հետ մի որևէ  
բարակ, բայց խելացի գրքոյի, և օդուում  
է ամէն մի ազատ ըովէռվ, որ կարգայ:  
Նա ասում է՝

—Լաւ չէ, որ դուք լուրջ կերպով ոչըն-  
չով չէք զբաղւում, Լէօնիդ:

—Ես վատ չեմ սովորում, —պատասխա-  
նում է նորան Լէօնիդը:

—Ես այդ գիտեմ, —ասում է Մարիա  
Նիկոլաևնան, —բայց ես խորհուրդ կը-  
տայի ձեզ պարապւել ինքնուրոյն ընթեր-  
ցանութեամբ: Կան շատ խելօք և շատ օդ-  
տակար գրքեր:

Նա խօսում է երկար և խելացի:  
Լէօնիդը նայում է նորա երեսին, և  
մաածում է, նորա փափուկ շրթունքները  
և նորա հեզ աչքերը չեն սազում նորա  
գէմքի խելացի արտայայտութեան, և  
հէնց դորա համար նա ամբողջովին ան-  
հեղեղութիւն է ներկայացնում: Փոքրիկ,

ոչ տղեղ, իրանաւէտ, գեղեցիկ սանր-  
ւածքով, գեղեցիկ, թէև համեստ հազն-  
ւած, —բայց և այնպէս ինչ որ անհեղե-  
դութիւն կայ նորա մէջ: Եւ ինչ է նա թո-  
թովում գրքերի մասին, —ա՞հ, յիմար?  
ինչ կարող են գրքերը ասել նորան, մոխ-  
րագոյն քարէ սանդուխքի վայրի սաննու-  
թեան տակ անձկութեան մէջ տառապողին?

Տան մէջ ապրում էին շատ ջահել աղ-  
ջիկներ և ջահել կանայք, —և շատ էին  
գալիսնորանց մօտ տունը ջահել ընկերու-  
հիներ, —և նոքա բոլորը Լէօնիդի հետ  
բաց էին անում բարի, սփոփիչ զրոյցներ,  
—և նոցանից ոչ մէկը ընդունակ չէր  
սփոփել նորան:

---

Հաւաքեց Ելենան իր ազգականուհինե-  
րին և ընկերուհիներին, և ասաց նոցա՝

—Մենք բոլորս էլ ափսոսում ենք մեր  
սիրելի Լէօնիդին, որը չի ցանկանում  
սփոփւել: Նա յամառութեամբ վերադառ-

Նում է մեծ սանդուխքի վարի հրապարակի նստարանի վրայ և նայում է սանդուխքի մոխրագոյն, սառըաստիճաններին։ Թւում է նորան, որ սանդուխքով իջնում են վշտի անտեսանելի լրաբերներ՝ անվերջարքով անցնում են նորա առաջով և ասում են նորան դառն խօսքեր, — պախարակում են կեանքը և փառաբանում մահը։ Բայց մենք կը հալածենք չար լրաբերներին։ Յանուն նորա, ով ծնւեց, որ արդարացնի կեանքը և յաղթի մահը, մենք կը հալածենք նոցա։ Վշտի մոխրագոյն սանդուխքը մենք կը կերպարանափոխենք գեղցկութեան և ոգեսրութեան ոսկէ սանդուխքի։

— Ուրեմն ինչպէս անենք այդ? հարցըին նորան քոյրերը և ընկերուհիները։

Եւ պատմեց նոցա Ելենան իր մտադրութիւնը։ Նոցանից մի քանիսը, — ձշմարիտն ասած, քչերը, — համաձայնեցին միանդամից, իսկ միւսները վիճում էին

և հրաժարւում։ Նորանց անյարմար և ամօթալի էր թւում կատարել այն, ինչի մասին ասում էր Ելենան։ Նոքա վախենում էին, որ նորանց կը դատապարտեն գրացիները, և որ նոցա վերայ կը բարկանան նոցա ծնողները։ Վիճում էին և երկար համոզում էին նոցա մնացեալները, — մի քանի օր անցաւ այդ խորհրդածութիւների մէջ, — և, վերջապէս, բոլորը համաձայնեցին։ Եւ շատ էր նոցա թիւը, շահել կանանց և աղջիկների, Լէօնիդի ազգականուհիների և նոցա ընկերուհիների — երբոր Ելենան հաշւեց նոցա, պատրաստ գալու ոգեսրութեան շարքերով Լէօնիդի մօտ, — թիւը քսանսկեօթն էր։

Տօթային օրը նորից թեքւում էր, և հանգիստ էր լուսթեան մէջ ընկղմած հինտան շրջակայքը։ Կեծիների ստերները, ինչպէս երկար ճանապահից խոնջացած ճամպորդուհիներ, յոդնած իջան մոխրագոյն սանդուխքի վարի աստի-

ճանների վերայ: Լէօնիդը նստած էր իր սովորական տեղում: Նա գիտէր, որ մայր մտնող արեգակը շուտով կերևայ կեծի ծառուղու արանքներով, և կարճ փաղաքշալից-ալագոյն յոյսով կը ջերմանան մոխրագոյն աստիճանները, որպէսզի մի քանի բոպէից յետոյ նորից սառչեն և քարանան իրանց աղօտ, մոխրագոյն անյուսութեան մէջ: Յամառ թախծութեամբ ասում էին նորան կամացուկ առաջով սահող վշտի լրաբերները՝

—Ծիծաղի և ուրախութեան խարէութեամբ հրապութում է կեանքը, —մի հաւատալ նորա հրապոյըներին:

—Բազմաթիւ են գերող մոլորութիւնների և գայթակղութիւնների ճամպանները, բայց ճշմարտութեան ճանապարհը մի է:

—Մահւան ճանապարհ:

—Ծիծաղում է կեանքը նոցա վերայ, ոլ երազում է արդարացնել նորան:

—Միայն մահւան մէջն է —ճշմարտու-

թիւնը — միայն մահւան է պաականում ճշմարիտ յաղթութիւնը:

Եւ գալիս էին մէկը միւսի յետեից: Բայց ահա եկաւ ելենան: Նա ասաց լէօնիդին, — և նորա ձայնը թեթեակի յուղմունքից գողում էր՝

— Կանցնեն կարճ բոպէնները, և ոսկէ սանդուխքի վրայով կանցնեն սիրելի կեանքը փառաբանող ոգեսրութեան աւեգաբերուհիները: Եւ դու կուրախանաս նոցա, լէօնիդ?

— Այս, — ասաց լէօնիդը, — ո եթէ նոքա գային, բայց ահա առաջս միշտ նոյն սովորական նսեմութիւնն է և մոխրագոյն քարի սաննութիւնը և աստիճանների վերայ քամհար եղած մոխրագոյն փոշին:

— Սպասիր, — ասաց ելենան:

Նա գանգաղ բարձրանում էր աստիճաններով և երկար ժամանակ հետեւում էր լէօնիդը արևի տակ նորա թեթե վարդագոյն շորի փայլին: Նա անյայտացաւ հին

տան դռներով։ Եւ ոչինչ չկար պարտիշում, և ամբողջ շրջակայքը սուզւած էր տարօրինութեան մէջ։ Արևելքում, ինչոր տեղում, զգայուն լոռութեամբ համակւած պարտիզի ծառերի յետեւ մանիշշակագոյն, արձիճային մըրիկի նախազգացում կար։

Յետ քաշւեցան մոխրագոյն աստիճանների կեճիների ստւերից, և հանդարտ լոյսը ընկաւ կէօնիդի ոտներին։

Այն ժամանակ յանկարծ սանդուխքով իջնող վշտի լրաբերների մէջ տարօրինակի իրարանցում առաջ եկաւ, և նոցա դէմքերի վերայ արտայայտւեց սաստիկ վախ։ Ողբագին, նման հանգստութիւնը վրդովւած թռչունների ձայնին, նոքա տարածեցին հանդարդ սլացող երեկոյեան օդի մէջ իրենց սուրբ սև թևերը, և արագ երկար շարքով սլացան դէպի երկինք։ Խոցւած երեկոյեան ալագոյնով և կապտագոյն բարձրութեան սաթանման կանաչա-

գունով, նորանք կանգնեցին, ինչպէս մի ամպի զանգւած, և նոցա ձայները նման էին այն ժամանակ հեռաւոր որոտի արձագանքերին։ Զարմացաւ կէօնիդը և բարձրացրեց աչքերը դէպի իր հին տան բարձր աշտաբակը։ Հրաշալի տեսարան ներկայացաւ նորա աչքերին։

Խնդագին կանանց և աղջիկների շարքը անշտապ իջնում էր բարձր աշտաբակից սանդուխքի աստիճաններով։ Երեկոյեան արշալոյսի ճառագայթների մէջ ալագոյն անմեղութեամբ ուրախանում էին, ոսկէց գունի տալով, յանկարծ կենդանացած աստիճանները սիրելի աւետարերուհիների նուրբ, մերկ գարշապարների տակ։ Թեթև տիւնիկանները սփածանում էին խընդագին գնացողների և խնդացող աւետարերուհիների իրանաւէտ մարմինները, — և նոցա տիւնիկանների գոյները, ինչպէս փողփողիւն ալագոյն կըրակների հոսանք և բոցավառ վարդեր, սաթագոյն և կա-

նաչ լեռնակարսներ լինէին ասես: Նոցա  
սիրելի ուսերը ուրախանում էին քամու  
և արեգակի համբոյըներով, և մերկացած  
թերը նոցա ցնծում էին ալանալով ծի-  
ծաղող արշալոյսի ալագունով, և ուրախ  
էին թեթև շարժման մէջ մինչև վերը բաց  
նոցա ոտերը, և աւետաբերուհիների խըն-  
դագին մերկ գարշապարների տակ կեր-  
պարանափոխեցին. սանդուխքի սառը  
աստիճանները ուրախ ծիծաղի, — և ոսկէ  
դարձաւ լէօնիդի աչքերին սանդուխքը,  
գեղեցկութեան և ոգևորութեան սան-  
դուխքը:

— Սիրելի աւետաբերուհիներ, — ասում  
էր լէօնիդը տարածելով գէպի նոցա ձեռ-  
քերը — օ, ուրախութեան սիրելի աւետա-  
բերուհիներ:

Ուրախ և թեթև անցնում էին լէօնիդի  
առաջով, և ասում էին նորան ուրախու-  
թեան և սփոփանքի խօսքեր:

— Ստեղծագործելով գեղեցկութիւնը ու-

րախանում ենք, — ասում էր Ելենան, — և  
մեր վիշտը կերպարանափոխում ենք թե-  
թև ուրախութեան:

— Ծարաւի ենք սիրոյ, և սիրում ենք,  
և ուրախանում ենք, — ասում էր Ելիզա-  
ւետան:

— Որքան ուրախալի է շնչել երկրի սի-  
րելի օդով! — ասում էր Աննան: — Որքան  
ուրախալի է խոր մարմինը տալ բնութեան  
խստ — փաղաքշալից համբոյըներին!

— Որքան սիրելի է մայրենի հողը մեր  
ոտների տակ? — ասում էր Ալեքսինան:

— Ինչպիսի ուրախ հեռուներ է բաց ա-  
նում երկիրը մեր առաջը, անծայր հեռու-  
ներ? — ասում էր Անտոնինան:

— Ինչպիսի քաղցր բուրմունք ունեն  
ծաղիկները? — ասում էր Վալենտինան: —  
Ինչպիսի ուրախութեամբ շնչում են երկ-  
րային արօտները?

— Ինչպիսի ուրախութիւն է — համփառ-  
նալ բարձր, բարձր, զմայլւել երկնքով և

աստղերով?—ասում էր Զինաիդան:

—Այնքան շատ ուրախութիւններ կան  
երկրի վերայ?—ասում էր Մարիան,— և  
ուրախացուցիչ է աշխատանքը, և սփո-  
փիչ են խորիմաստ գրքերը:

Եւ բոլոր քսանեեօթը կանայք և աղ-  
ջիկները անցան Լէօնիդի առաջով, փա-  
ռաբանելով կեանքը և հրձւելովնորանով:

Եւ յետոյ շրջապատեցին նորան, պողոտ-  
ւեցին թեթև վազով, գրաւում էին նո-  
րան ոգեսրութեան ուրախ և թեթև պառյ-  
տով, և երեկոյեան ցողով թաց արօտի  
վերայ կազմեցին ուրախ, մոլեգին խմբա-  
կաքաւ:

Իսկ նորանց վերև բարձրութեան վե-  
րայ գոռում էին ծանր ամպերը, և արագ  
մթնում էր երկնքը, և խռովութիւն ու-  
ցասում էր տիրում, և կատաղած վշտի  
լրաբերների ձայներն էին որ լսում էին:  
Եւ որոտին, և կայծակի փայլին, և փո-  
թորկի ձայներին,, և տառափի սառը հե-

ղեղին պատասխանում էին երկրային  
խելակորոյս ոգեսրութեան մոլեգին, ցըն-  
ծալից ձայները: Իր համար էր ուրախա-  
նում ցնծացող պատանեկութիւնը, սովո-  
րական հողայինը կերպարանափոխելով  
հոգին ոգեսրող և գեղեցկացնող արտա-  
սովորութեան:

## ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐՏԻ ԲԸՆ


«Ե՞նչու ջախջախտած են երջանկութեան  
թեւերը», կ. Մօրօղովա, թարգմ. Յակովը  
Գենջեան, Թիֆլիս 1911, գինն է 3 կոպ.

Միայն երեք կոպէկ արժէ այս զմայլե-  
մի գոքոյկը, որի հայերէն թարգմանու-  
թիւնն ուղղակի օրինակելի է. գրեթէ ոչ  
մի թերութիւն, նիւթ ընոյնպէս շատ գե-  
ղեցիկ է. հեղինակը մի քնքոյշ պատկե-  
րով բացատրում է, թէ ինչ է երջանկու-  
թիւնը:

Ես կցանկայի, որ բոլոր գրագէտ հա-  
յերը, սկսած մանուկներից մինչև ծերու-  
նիները, բոլորը կարդային համեստ ար-  
տաքինով այս սքանչելի գրքոյկը:

Մ. Մատէնճեան

«Նոր Դպրոց»



Այս անգամ Գենջեան ամուսինները  
տուել են լէօնիդ Անդրէնի «Անզգութու-  
թիւն», կ. Մօրօղովայի «Ինչու ջախջախ-  
տած են երջանկութեան թեւերը», Դ.  
Այզմանի «Հանգոյցի լուծումը» փոքրիկ  
պատմուածքները:

Թարգմանութիւնը կատարւած է յա-  
ջող, ախողը մաքուր է, գինը մատչելի՝  
3-ից → 5 կոպէկ:

Շատ ցանկալի կը լինէր, որ այդ սէ-  
րիան շարունակէր և պարբերաբար լոյս  
ընծայւէին հետեւալ զրքոյիններն ևս:  
«ՀՈՎԻՑ»



ԳՐԻԶ

ՌՈՒՍ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐ

Լոյս են տեսել

1. Դ. ՃԵԶՄԱՆ Հանգոյցի լուծումը 3 կ.
2. ԱՅՕՆԻ ԱՆԴՐԵԵԽ Անգղուշութիւն 5 կ.
3. ԿՍԵՆԻԱ ՄՈՐՈՉՈՎԱ Խոչժե են ջախջախ-  
ւած երջանկութեան թեհը 3 կ.
4. Ա. Ի. ԿՈՒՊՐԻՆ Տրամւայում 5 կ.
5. ՕՍԻԳ ԴԻՄՈՎ Վեստալուհի 5 կ.
6. ՖԷՇՐ ՍՈԼՈԳՈՒԹՅ Ռոկէ Սանդուխք 8 կ.

Փատրաստում են տպագրութեան հա-  
մար հետեւեալ հեղինակների զուածները՝  
ԵՎԳԵՆԻՑ ԶԻՐԻԻԿՈՎ, ՄԵՐԳԻԼԻ-  
ՑԵՆՍԻԻ, ԲՈՐԻՍ ԶԱՅՑԻԻ, ՌԵՄԻ-  
ԶՈՎ, ՄԵՐԳԻՑ ԳՈՐՈԴԵՑԿԻ Ահեր-  
ԶԵՆԿՕ, եւ այլն:

Վաճառուում են Թիֆլիսի գրավա-  
ճառանոցներում:

Պահեստը՝ Տիֆլիս, Եлизаветин-  
սկая, 114. Գոնդզեան։

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432384

13.557